



**ԴԻԼԻՋԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
(ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ)**

Հասցե. ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55

Հեռ. (094) 763 594, E-mail info_dilijan@aarhus.am, albertharoyan@rambler.ru

№ Ե-003/14

16-ը ապրիլի 2014թ.

*ՀՀ Բնապահպանության նախարարության
«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի
տնօրեն Աշոտ Դավթյանին
Դիլիջանի Օրհուս կենտրոնի համակարգող
Ալբերտ Հարոյանից*

Հարգելի պարոն Դավթյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. «Դիլիջան» Ազգային պարկում 2013թ իրականացված աշխատանքների մասին,
2. «Դիլիջան» Ազգային պարկում 2014թ նախատեսվող աշխատանքների մասին,
3. Ի՞նչ փուլում է «Դիլիջան» Ազգային պարկի նոր կառավարման պլանի կազմման գործընթացը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ 5-օրյա ժամկետում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Դիլիջանի օրհուս կենտրոնի համակարգող

Ալբերտ Հարոյան